ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 114-Ա

ք. Երևան

«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի օգոստոսի 29-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 43 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 01-ը «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» տեսալսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) 2025 թվականի հուլիսի 26-ից 31-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկման արդյունքում հայտնաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթների պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 04-ին թիվ Ե/03/03.2/642-25 գրությամբ Հեռարձակողին հարցում է ուղարկել Ծրագրով հեռարձակված ֆիլմերի (թվով 9-ը ֆիլմեր) հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի վերաբերյալ:

2025 թվականի օգոստոսի 28-ին Հանձնաժողով մուտքագրված գրությամբ Հեռարձակողը հայտնել է.

«(...) Հուլիսի 26-ից 31-ը ընկած ժամանակահատվածում «Սյունիք» հեռուստաընկերությունը

- *Ձենքերը վեր*
- *Անսուրբ երրորդությունը*
- *Բոլորին անհայտը*
- *Կարատե տղան.Լեգենդներ*
- *Մեգան 2,0*
- *Վտանգավոր կենդանիներ*
- *Միկաելա*
- *Թաղամասի պահակախումբ*

ֆիլմերը հեռարձակել են առանց դրա իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության»:

Սակայն «Երջանիկ Գիլմորը 2» («Happy Gilmore 2») ֆիլմի վերաբերյալ Հեռարձակողը Հանձնաժողովին որևէ տեղեկություն չի ներկայացրել:

Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2025 թվականի օգոստոսի 29-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն), ըստ որի՝ Հեռարձակողի «ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» տեսալսողական ծրագրով նշված ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ 9 ֆիլմերը (այսուհետ նաև՝ ֆիլմեր)՝

1) «Զենքերը վեր» («Guns Up»)
2) «Անսուրբ երրորդությունը» («The Unholy Trinity»)
3) «Բոլորին անհայտը» («A Complete Unknown»)
4) «Կարատե տղան. Լեգենդներ» («Karate Kid: Legends»)
5) «Երջանիկ Գիլմորը 2» («Happy Gilmore 2»)
6) «Մեգան 2.0» («M3GAN 2.0»)
7) «Վտանգավոր Կենդանիներ» («Dangerous Animals»)
8) «Միկաելա» («Mikaela»)
9) «Թաղամասի պահակախումբ» («Neighborhood Watch»)

Վերջիններս հեռարձակվել են օտար լեզվով՝ ռուսերեն:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի օգոստոսի 29-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 43 վարչական վարույթը:

Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 29-ին թիվ Ե/04/04.1/694-25 գրությամբ Հեռարձակողին ծանուցել է հարուցված թիվ 43 վարչական վարույթի մասին և տեղեկացրել, որ տվյալ հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները, այդ թվում՝ տեղեկատվություն «Երջանիկ Գիլմորը 2» («Happy Gilmore 2») ֆիլմի հեռարձակումը հավաստող հիմքերի և նաև պարզաբանումներ՝ ֆիլմերը օտար լեզվով հեռարձակելու վերաբերյալ:

Հեռարձակողը վարչական վարույթի ընթացքում և նշված գրությանն ի պատասխան որևէ լրացուցիչ պարզաբանում կամ բացատրություն Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող

պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, հնչյունավորումով և (կամ) ենթագրով): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքի սահմանող դրույթները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2021 թվականի հունվարի 20-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 307, գործողության ժամկետը՝ 21.01.2021թ.-21.01.2028թ.) և 2021 թվականի մայիսի 20-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 312, գործողության ժամկետը՝ 21.05.2021թ.-

21.05.2028թ.) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները: Ըստ այդմ՝ տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի, իսկ օտար լեզվով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, հնչյունավորումով կամ ենթագրով): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը կիրառելի է բացառապես բնօրինակ լեզվով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության նկատմամբ: Բացի այդ, ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք, որ.

«ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» տեսալսողական ծրագրում հեռարձակվել են ոչ սեփական տեսալսողական հաղորդումներ՝ ֆիլմեր, առանց ֆիլմերի նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի թույլտվության՝ հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի բացակայության պայմաններում:

Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը. Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստը՝ առանց գույքային իրավունքները կրող անձի թույլտվության ֆիլմերի հեռարձակումը, ինչը հստակ ներկայացված է Հանձնաժողով ներկայացված գրությամբ:

Հիմք ընդունելով վկայակոչված դրույթների պահանջները՝ արձանագրում ենք նաև, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվությունը (ֆիլմերը) հեռարձակել է Օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ հեռարձակելով օտար լեզվով առանց հայերեն ընկալման միջոցների ուղեկցության:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է՝ Հեռարձակողի կողմից Ծրագրում հեռարձակվել են ֆիլմեր՝ առանց ֆիլմերի նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի թույլտվության և օտար լեզվով՝ ռուսերեն: Սույն համատեքստում Հեռարձակողը չի պահպանել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Վերոնշյալ դրույթների խախտումները համապատասխանում են Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի և 57-րդ հոդվածի 14-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ)

պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասը սահմանում է.

«14. Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը մեկ տարվա ընթացքում կրկնել է նույն խախտումները՝ տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրերի և օտար լեզվով հեռարձակում իրականացնելով, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ և 31-րդ մասերի հատկանիշներին:

Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում,
2) տուգանք,
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում,
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով և 57-րդ հոդվածի 2-րդ, 14-րդ և 31-րդ մասերով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը մեկ տարվա ընթացքում կրկնակի խախտելու համար՝ Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 112 910 (մեկ հարյուր տասներկու հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամի չափով:

2. «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջը մեկ տարվա ընթացքում կրկնակի խախտելու համար՝ Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով կիրառված տույժի եռապատիկի չափով՝ 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 26
ք.Երևան